22
ԴԵԿՏԵՄԲԵՐ
2025

Luys Lnyu®

Ո՞Վ Է ՀԻՇՈՒՄ ԱՆՑՅԱԼԸ

Ո՞Վ Է ՀԻՇՈՒՄ ԱՆՑՅԱԼԸ

Ով ղեկավարում է անցյալը, վերահսկում է ապագան:

Ջորջ Օրուել, «1984»

Ժողովուրդների հավաքական հիշողությունը երբեք չի եղել պարզապես անցյալի նկարագիր: Այն քաղաքական ռեսուրս է, ինքնության հիմք և ապագայի մասին պատկերացումները ձևավորող մեխանիզմ: Ուստի որոշիչ է դառնում հարցը՝ ո՞վ է որոշում, թե ինչ պիտի հիշենք որպես ժողովուրդ, ինչն է դառնում ազգային պատմության մաս, և ինչն է դուրս մղվում մոռացության: Արդյո՞ք մեր անցյալի մասին պատկերացումները ձևավորվում են ազատ, թե՞ կառավարվում են՝ քաղաքական նպատակներով: Այս հարցերը դառնում են օրակարգային, երբ վերլուծում ենք, թե ինչպես են տարբեր պետություններ և հասարակություններ կառուցում իրենց **հիշողության քաղաքականությունը**:

Ժամանակակից հիշողության ուսումնասիրությունները ձևավորում են երեք հիմնական մոդել, որոնց միջոցով պետությունները և հասարակությունները կազմակերպում են «հիշելու քաղաքականությունը»՝ **անտագոնիստական**, **կոսմոպոլիտ** և **ագոնիստական**: Այս մոդելները ոչ միայն առաջարկում են պատմության տարբեր մեկնաբանություններ, այլև բացահայտում են հիշողության ուժային հարաբերություններն ու ժողովրդավարական մշակույթի մակարդակը:

Անտագոնիստական հիշողություն

Անտագոնիստական հիշողության մոդելի հիմքում մեկ գերիշխող պատմական նարատիվի հաստատումն է: Այստեղ պետությունը կամ ազդեցիկ խմբերը ձգտում են տարածել սեփական «ճշմարտությունը», իսկ այլընտրանքային պատմությունները մերժվում են կամ հետապնդվում:

Հիմնական հատկանիշներն են՝

- պաշտոնական պատմության պարտադրանք,
- այլընտրանքային նարատիվների մարգինալացում,
- ցենզուրա, քարոզչություն, երբեմն՝ ճնշում,

- անցյալի շուրջ քաղաքական պայքարի դադարեցում «միակ ու վերջնական» ճշմարտության միջոցով:

Այսպես, Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական և համակարգային ժխտումն անտագոնիստական հիշողությանը բնորոշ դրսևորում է: Այստեղ պատմությունը դառնում է ազգային ինքնությունը պաշտպանող քաղաքական գործիք:

Անտագոնիստական հիշողությունը վերաբերելի է ավտորիտար համակարգերին: Այստեղ պատմությունը դառնում է **հաստատված ճշմարտություն**՝ պետության կառուցած միակ նարատիվ, որն օգտագործվում է լեգիտիմություն ստեղծելու և ընդդիմախոսությունը ճնշելու համար: Հաննա Արենդտը նման համակարգերը բնորոշում է որպես «ոչ քաղաքական բռնակալություն», քանի որ այնտեղ բաց քննարկումը պարզապես բացակայում է:

Կոսմոպոլիտ հիշողություն

Կոսմոպոլիտ մոտեցումը ձգտում է հաղթահարել նեղ ազգային ինքնապատկերները և անցյալի մասին խոսել որպես համամարդկային փորձառություն: Հիշողությունը դիտարկվում է ոչ այնքան «մերը», որքան «մարդկության ընդհանուր պատմության» մաս:

Հիմնական հատկանիշներն են՝

- համամարդկային արժեքների առաջնայնացում,
- հաշտեցման ժեստեր և փոխճանաչում,
- պատերազմների, բռնությունների և ցեղասպանությունների համընդհանուր դատապարտում:

Օրինակ՝ 1984 թվականին երկու նախկին հակառակորդ առաջնորդների՝ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանի և Գերմանիայի կանցլեր Հելմուտ Կոլի համատեղ հարգանքի տուրքի մատուցումը Վերդենի ռազմադաշտում ընկած զինվորներին, ինչն ազգային պատմության սահմանները տեղափոխեց համամարդկային ողբերգության դաշտ: Կոսմոպոլիտ մոտեցման դրսևորման օրինակ կարելի է դիտարկել նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, քանի որ միջազգային հանրությանն այն ներկայացվում է ոչ միայն որպես «հայերի ցավ», այլ նաև որպես համամարդկային ողբերգություն, մարդկության դեմ հանցագործություն, որի ճանաչումը ենթադրում է նաև հետագայում նման իրողությունների կրկնման բացառում:

Ագոնիստական հիշողություն

Ագոնիստական մոդելն ամենաընդարձակ և ժողովրդավարական մոտեցումն է: Այստեղ հակասական հիշողությունները չեն ճնշվում, այլ ինստիտուցիոնալացվում են բանավեճի միջոցով:

Տեսաբան Շանտալ Մուֆի տեսության համաձայն՝ առողջ հասարակությունը չի կարող ամբողջությամբ ազատ լինել հակասություններից, և հակասությունը պետք է լինի ոչ թե թշնամանք, այլ լեգիտիմ անհամաձայնություն:

Հիմնական հատկանիշներն են՝

- հակասական հիշողությունների ընդունում,
- հանրային բանավեճի համար ինստիտուցիոնալ հարթակներ,
- մրցակցող նարատիվների լեգիտիմություն,
- պատմության բազմաձայնություն:

Օրինակ՝ Բելգիայի ֆլամանդացիներն ու վալոնները ունեն տարբեր պատմական հիշողություններ Երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ, սակայն երկուսն էլ ներառված են կրթության, մշակույթի և հանրային մեդիա հարթակներում: Սա ագոնիստական հիշողության գործնական օրինակ է:

Կարելի է ասել, որ ագոնիստական հիշողությունը հատուկ է ժողովրդավարական համակարգերին: Ժողովրդավարական պետություններում հիշողությունը ձևավորվում է հանրային բանավեճի, քննադատության ու բազմակարծության միջոցով: Որպես օրինակ կարելի է ներկայացնել ԱՄՆ-ում «Սև պատմության ամիսը»՝ ընդդեմ ռասիզմի պատմական քննարկումները կամ Կանադայում՝ աբորիգենների իրավունքների շուրջ դիսկուրսները: Այստեղ հիշողությունը ոչ միայն հանդես է գալիս որպես պատմական փաստ, այլև դառնում է քաղաքացիական կրթության գործիք:

Mythscape՝ որպես ազգային ինքնության ձևավորում

Բրիտանացի գիտնական Դան Բելն առաջարկում է **mythscape** հասկացությունը՝ առասպել (myth) + լանդշաֆտ (landscape) բառերի համադրությամբ: Դա այն դիսկուրսիվ տարածքն է, որտեղ ազգերը ստեղծում, վերաձևում կամ քանդում են իրենց մասին առասպելները:

Այսպես, Բրիտանական կայսրությունը երկար ժամանակ ներկայացվել է որպես «քաղաքակրթություն տարածող» ուժ, մինչդեռ հետագայում նախկին գաղութներից եկած քաղաքագետներն ու մտավորականները բացահայտեցին գաղութային բռնությունների՝ մինչ այդ մոռացված պատմությունը: Այս բախումը հենց mythscape-ի դրսևորումն է:

Ժառանգական հիշողություն

Պատմական հիշողությունը միշտ չէ, որ կրում են անմիջապես փորձառություն ունեցողները: Մարիան Հիրշը, վերլուծելով Հոլոքոստից հետո ծնված սերունդների գրականությունն ու արվեստը, առաջ է բերել **«պոստմեմորիա»** հասկացությունը՝ այն հիշողությունը, որը փոխանցվում է սերունդներին ու դառնում նրանց ինքնության մաս, չնայած նրանք չեն ապրել տվյալ իրադարձությունները: Օրինակ՝ հայկական սփյուռքում ցեղասպանության հիշողությունը՝ փոխանցված ընտանիքից, համայնքից և մշակույթից, դարձել է երրորդ, չորրորդ սերնդում ծնված հայերի ազգային ինքնության առանցքային բաղադրիչ, անգամ եթե սերունդները չեն եղել դրա անմիջական ականատեսը:

Պոստմեմորիան բացատրում է, թե ինչու են պատմական վերքերը երկար ժամանակ շարունակում ազդեցություն ունենալ քաղաքական վարքի, արդարության պահանջի և ինքնության ձևավորման վրա:

Հիշողությունը՝ որպես պայքարի դաշտ

Ժամանակակից տեսություններն ընդգծում են, որ անցյալի մեկնաբանությունը **մրցակցային գործընթաց** է: Տարբեր խմբեր պայքարում են՝ ինչ հիշել, ինչպես հիշել, և ինչու հենց այդպես հիշել: Օրինակ՝ ԱՄՆ-ում քաղաքացիական պատերազմի հիշողությունը սուր մրցակցության դաշտ է. մի կողմից՝ «Դաշնակիցների» հերոսացման նարատիվն է, մյուս կողմից՝ ստրկության և ռասայական ճնշման վերաիմաստավորումը: Հիշողությունը, ըստ այս մոտեցման, կայուն չէ. այն ստեղծվում է պայքարի, լեգիտիմացման, մոռացման և դիսկուրսիվ վերահսկողության ճանապարհով:

Քաղաքականությունը ոչ միայն իրավական կամ նյութական հարց է, այլ ճանաչման: Կան խմբեր, որոնց պատմական ցավը **ճանաչված չէ պետական մակարդակով**, ինչը հանգեցնում է մարգինալացման: Օրինակ՝ Ավստրալիայի աբորիգենների կամ Կանադայի առաջին ազգերի նկատմամբ երկար ժամանակ պաշտոնական լռություն է եղել: Նրանց պատմական փորձը միայն վերջերս է սկսել մտնել կրթական ու պետական հռետորաբանության մեջ: Այս համատեքստում տեսաբան Շառլ Թեյլորը նշում է, որ արդար հասարակությունը չի կարող լինել առանց պատմական արդարության ճանաչման:

Մեդիայի ազդեցությունը հիշողության վրա

Ժամանակակից մեդիան ոչ միայն հաղորդում, պատմում է պատմությունը, այլ նաև ստեղծում: Ֆիլմերը, սոցցանցերը և հեռուստատեսությունը դարձել են հիշողության ձևավորման հիմնական գործիքներ՝ փոխակերպելով պատմությունը վիզուալ, էմոցիոնալ և հաճախ՝ զանգվածային սպառման ձևաչափով: Գոյություն

ունի անգամ նոր տեսական ուղղություն՝ «**մեդիամնեմոնիկա**», որը վերլուծում է, թե ինչպես է մեդիան վերափոխում պատմական հիշողության ձևավորումը: Օրինակ՝ Սթիվեն Սփիլբերգի *«Շինդլերի ցուցակը» (Schindler's List)* ֆիլմը Հոլոքոստի հանրային ընկալման վրա ունեցավ նույնքան, եթե ոչ ավելի, ազդեցություն, որքան պատմական դասագրքերը: Այսպես հիշողությունը դառնում է սպառողական արտադրանք:

Հայաստան. պայքար ընդդեմ պատմական հիշողության

Հայաստանում վերջին տարիներին պատմական հիշողությունը վերածվել է ոչ միայն հանրային բանավեճի թեմայի, այլև քաղաքական դիրքորոշումների կառուցման կենտրոնական առանցքի: Եթե հիշողությունը, ինչպես նշում են ժամանակակից տեսաբանները, ունի «անցյալը ներկային կապելու» և «ինքնության ձևավորման» գործառույթ, ապա Հայաստանի պարագայում այն դարձել է նաև պետական իշխանության, ընդդիմադիրների ու հասարակության միջև գոյություն ունեցող լարումների արտացոլում: Հիշողության շուրջ պայքարը այստեղ ոչ այնքան ինտելեկտուալ, որքան ուղիղ կերպով քաղաքական գործընթաց է. միմյանց հետ մրցակցում են պատմության մեկնաբանությունները, ազգային ինքնության պատկերացումները և անվտանգության մասին հակասական պատկերները: Հայաստանի ներկա իշխանությունների քաղաքականությունը այս դաշտում հաճախ առանձնանում է ոչ թե հիշողության զարգացմամբ, այլ նախորդ պատմական նարատիվների «ապամոնտաժմամբ», որն իր հերթին ձևավորում է նոր՝ հակասական և անկայուն «mythscape»: Հաղթանակների, ինքնորոշման գոյապայքարի մասին պատմությունները, որոնք հանդիսանում են հայկական ազգային ինքնության հիմք, պետական մակարդակում դադարում են քարոզվել, պատմվել, ինչի արդյունքում դրանց կրողները մնում են միայն անհատական հիշողություն ունեցողները: Միաժամանակ կտրուկ նվազել է մեդիա դաշտում պետական հովանավորությամբ հայրենասիրական ու պատմական ֆիլմերի արտադրությունը, ցուցադրությունը, հայրենասիրական և ազգային երգերի տարածումը և հանրայնացումը:

Հայաստանի ներկայիս իշխանությունների մոտեցումը կարելի է բնութագրել որպես անտագոնիստական տարրեր պարունակող, որտեղ փորձ է կատարվում գերիշխող դարձնել միայն պետական նարատիվը՝ մերժելով այլընտրանքային մեկնաբանությունները: Այս գործելաոճն առավել տեսանելի է այն հարցերում, որոնք վերաբերում են պատերազմներին, անվտանգության համակարգին, նախորդ տասնամյակների քաղաքական որոշումներին ու պետականաշինությանը: Օրինակ՝ 44-օրյա պատերազմը ներպետական քարոզչական հռետորաբանության մեջ ներկայացվում է որպես նախորդ իշխանությունների «անխուսափելի արդյունք», ինչն իրականում զրկում է

հանրությանն ամբողջական պատմական քննարկումից: Այս մոտեցումը հիշեցնում է անտագոնիստական համակարգերին բնորոշ տիպաբանությունը, երբ անցյալի նկատմամբ ձևավորվում է միակողմանի մեղադրանքային նարատիվ, որը փաստացի փակուղի է դնում բազմաձայնությանը: Հասարակության տարբեր շերտեր շարունակում են պայքարել՝ ստանալու համար պատասխաններ՝ ինչու եղավ պարտությունը, ով էր պատասխանատուն և ինչ դասեր պետք է քաղել հարցերին, սակայն պետությունն այս հարցերի շուրջ խուսափում է խորքային քննություն ներկայացնել, ինչն էլ թույլ է տալիս, որ հիշողությունը ոչ թե դառնա ներկան հասկանալու գործիք, այլ պարբերաբար բորբոքվող քաղաքական հակամարտության աղբյուր: Բացի այդ, 44-օրյա պատերազմի հանգամանքների «լղոզումը» կամ «քողարկումը» անմիջականորեն ազդում է պատերազմի ընթացքում զոհվածների ընտանիքների, ռազմագերիների և տեղահանվածների վրա՝ պատճառելով հավելյալ հոգեբանական և պատմական ցավ: Սա հիշեցնում է այն երևույթը, որի մասին գրում է Շառլ Թեյլորը, որ անարդարությունն առավել խորանում է, երբ ցավը չի ճանաչվում պետական մակարդակով:

Ազգային ինքնության առանցք դարձած Արցախյան շարժումը, 1990-ականներին պետական կայունացումը, ռազմական հաղթանակները վերջին տարիներին դուրս են մղվում պետական հռետորաբանությունից՝ դրանք փոխարինելով «խաղաղության օրակարգով», ինչը, ըստ էության, նեղ քաղաքական շահեր է սպասարկում և կրկին պարունակում է անտագոնիստական տարրեր, քանի որ պնդում է, որ հենց այդ օրակարգն է «միակ ներկա ճշմարտությունը»՝ միաժամանակ ճնշելով այլախոհությունը: Միաժամանակ, «խաղաղության օրակարգի» քարոզը կարելի է դիտարկել որպես կոսմոպոլիտ հիշողություն՝ խաղաղասիրություն, համամարդկային արժեքներ և այլն: Սակայն այստեղ հարց է առաջանում՝ արդյո՞ք այս կոսմոպոլիտիզմը բխում է արժեքային համակարգից, թե՞ հանդես է գալիս որպես քաղաքական նպատակահարմարություն: Հատկապես այս հարցը ակտուալ է ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ Ադրբեջանի կողմից Արցախի հայ բնակչության էթնիկ զտման փաստի համատեքստում: Արտաքին քաղաքականության մեջ Արցախի հարցով պատմաիրավական փաստարկներն աստիճանաբար «մեղմացվում են»: Պաշտոնական փաստաթղթերում և ելույթներում այն ձևակերպումները, որոնք տարիներով գործածվել են հայկական դիվանագիտության մեջ՝ ինքնորոշման իրավունք, պատմական արդարություն, էթնիկ անվտանգություն, դուրս են մղվում և փոխարինվում «տարածքային ամբողջականություն» մոտեցմամբ: Հայաստանի ներկայիս իշխանությունը փորձում է դուրս գալ պատմական, ազգային պատմության շրջանակներից, բայց Հայաստանի պարագայում դա չի ուղեկցվում համարժեք անվտանգային մեխանիզմներով: Հետևաբար այս կոսմոպոլիտիզմը միայն խոցելի է դարձնում Հայաստանը՝ որպես պետություն:

Հայաստանի ներկայիս պետական քաղաքականության մեջ տեղի է ունենում մի յուրօրինակ խառնուրդ, որտեղ քաղաքական նպատակահարմարությունը գերակշռում է պատմական ճշմարտության, իսկ նարատիվների կառուցումը՝ հանրային քննարկման նկատմամբ: Հասարակությունը կարծես ապրում է երկու հակադիր հիշողությունների բախման մեջ՝ պաշտոնական նարատիվը, որը նվազեցնում է պատմական իրադարձությունների արժեքը և ազգային պահանջատիրությունը, և մտավորական-հասարակական նարատիվը, որը փորձում է պահպանել պատմական ինքնության շարունակությունը՝ հակադրվելով գործող կառավարության ռազմավարությանը: Սա հատկապես խնդրահարույց է երիտասարդ սերնդի պարագայում: Ժառանգական հիշողությունը՝ պոստմեմորիան այսօր կանգնած է լրջագույն հակասությունների առջև: Ընդհանուր կրթական ծրագրերի փոփոխությունները, ինչպես նաև մեդիայի բևեռացումը հանգեցնում են նրան, որ երիտասարդները ստանում են ոչ թե միասնական պատմական գիտակցություն, այլ իրարամերժ պատկերացումներ այս կամ այն պատմական իրադարձության վերաբերյալ:

Պատմական հիշողությունը երբեք պարզապես անցյալի մասին չէ: Դա ներկայի մասին է՝ **ով ենք մենք և ինչ ուղի ենք ընտրում՝ որպես հասարակություն**: Հիշողության վարչակարգը ցույց է տալիս պետության վերաբերմունքը բազմակարծության, ժողովրդավարության և ինքնության հանդեպ: Հայաստանում պատմական հիշողությունը դարձել է պայքարի տարածք՝ պետական քաղաքականության, հասարակական պահանջների և ազգային ինքնության միջև: Մինչդեռ ժողովրդավարական համակարգերը ձգտում են դեպի ագոնիստական հիշողություն, որտեղ բազմակարծությունն ու բանավեճը դառնում են ինստիտուցիոնալացված պրակտիկա, Հայաստանի դեպքում նկատվում է հակառակ միտումը՝ պաշտոնական նարատիվի ուժեղացում, այլընտրանքային պատմությունների մարգինալացում, կոսմոպոլիտ, բայց անվտանգային առումով վտանգավոր մոտեցումներ, պոստմեմորիայի խզում: **Այս ամենը ցույց է տալիս, որ Հայաստանի համար պատմական հիշողությունը ոչ միայն անցյալի, այլև ապագայի հարց է**. ինչպես կհիշենք մեր պատմությունը, այդպես էլ կկառուցվի մեր պետականությունը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: